ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Քաղաքականություն

ԵՄՀ ուսանողների ակադեմիական շարժունության և արդյունքների ճանաչման

2019

WWW.EIU.AM

Վերնագիր	ԵՄՀ ուսանողների ակադեմիական շարժունության և արդյունքների ճանաչման քաղաքականություն
Համար	ԿՈՀ 1 Բ4-49-05
Հաստատման ամսաթիվ	14.06.2019
Հաստատող մարմին	Կառավարման խորհուրդ
Քաղաքականության նպատակը	Սույն քաղաքականությամբ կանոնակարգվում են «Եվրասիա Միջազգային Համալսարան»-ի (այսուհետ՝ ԵՄՀ) տարբեր ֆակուլտետներում, ինչպես նաև Հայաստանում կամ արտերկրում գտնվող այլ համարժեք հաստատությունում ուսանողի կողմից ձեռքբերված կրեդիտների ճանաչումը:
Քաղաքականության դրույթները	1. Եվրասիա միջազգային համալսարանը, ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի լիարժեք ներդրման և Բոլոնյան համակարգի տեսլականի իրականացման նպատակով որդեգրում է կրեդիտային կառուցվածքով ճկուն ծրագրերի զարգացման փորձը՝ խթանելով ուսանողների ակադեմիական անհատական հետագծի ձևավորումը և մրցունակության բարձրացումը: 2. Ըստ նոր մոտեցման և քաղաքականության, սովորողների շարժունությունը չպետք է հանգեցնի ուսման սահմանված ժամկետի ավելացմանը: 3. ԵՄՀ մասնագիտական ամբիոնները և կրթական ծրագրերի պատասխանատուները պարտավորվում են շարունակաբար բարելավել կրթական ծրագրերը՝ ապահովելով փոխանակման հնարավորություններ և ուսումնական պլանում հստակ ներկայացնելով փոխանակման «պատուհան» (mobility window): 4. Կրեդիտների ճանաչման և փոխանցման գործընթացը ԵՄՀ ստորաբաժանումները պարտավորվում են իրականացնել թափանցիկ ընթացակարգերով, որոնք չեն հակասում սույն քաղաքականությանը:
Կրեդիտների ճանաչման սահմանները	5. Ուսանողն ունի իրավունք կուտակելու կրեդիտներ ինչպես ԵՄՀ այլ ամբիոններում, ՀՀ և արտերկրյա բուհերում, այն-

	պես էլ կազմակերպություններից, գիտական կենտրոններից, ամառային դպրոցների կամ այլ ծրագրերից, որոնց արդյունքում տրամադրվում է կրեդիտ։ Ուսանողն իրավունք ունի համապատասխան որակավորման համար սահմանված ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածության ներքոհիշյալ սահմաններում փոխանցել կրեդիտ. • բակալավրի կրթական ծրագրի առավելագույնը 25 տոկոսի կամ 60 կրեդիտ, • մագիստրոսի կրթական ծրագրի առավելագույնը 50 տոկոսի կամ 60 կրեդիտ, • հետազոտողի կրթական ծրագրի (ասպիրանտուրա և հայցորդություն) 30 տոկոսի կամ 54 կրեդիտ։ 6. Բոլոր մակարդակներում ճանաչման ենթակա կրեդիտները կարող են լինել ինչպես կրթական, այնպես էլ հետազոտական և գործնական (կուտակված մասնագիտական կամ հետազոտական պրակտիկայի արդյունքում)։ 7. Եթե դասընթացը և վերջնարդյունքները համընկնում են ուսանողի կողմից ԵՄՀ-ում նախկինում անցած որևէ դասընթացի վերջնարդյունքների հետ, ապա կրեդիտը ընդունվում է, արտահայտվում գնահատականների տեղեկագրում և դիպլոմի հավելվածում, սակայն չի ազդում ՄՈԳ-ի վրա և չի հաշվառվում որպես հավելյալ կրեդիտ։ Նման կրկնություններից անհրաժեշտ է խուսափել եռակողմ համաձայնագիրը կազմելիս։
Գնահատում և ճանաչում	8. Կրեդիտների փխանցման և ճանաչման համար պատասխանատու ստորաբաժանումները պարտվորվում են ուսանողի շարժունության արդյունքում կուտակված ակադեմիական կրեդիտները և կրթական վերջնարդյուքները անարգել ընդունել և արտահայտել ուսանողի ՄՈԳ-ի հաշվարկում, դիպլոմի հավելվածում, եթե դրանք չեն հակասում տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքներին։ Հակասության դեպքում կրեդիտները նշվում են Դիպլոմի հավելվածում, սակայն չեն ազդում ուսանողի ՄՈԳ-ի ձևավորման վրա։

	9. Գնահատման ընթացքում ուսումնասիրվում է դասընթացի բովանդակությունը, վերջնարդյունքները, ծավալը, գնահատման մեթոդները: 10. Ամբիոնը իրավասու է որոշում կայացնել կրեդիտի ճանաչման համար հավելյալ պահանջների ներկայացման, այդ թվում բանավոր կամ գրավոր քննություն, պորտֆոլիոյի ներկայացում և այլն: 11. Ուսանողի կողմից ամբիոն ներկայացված կրեդիտի ճանաչման դիմումի ստացման դեպքում նախ ուսումնասիրվում է ԵՄՀ նախկին փորձը: Եթե փորձն արդեն առկա է, կրեդիտը ճանաչվում կամ չի ընդունվում առանց հավելյալ ուսումնասիրությունների: Եթե նախադեպ չկա, իրականացվում է հավելյալ ուսումնասիրություն: 12. Բակալվրի մակարդակում կուտակած կրեդիտները մագիստրոսական մակարդակում ընդունվում են միայն բացառիկ դեպքերում, եթե նախապես ամբիոնը տվել է համաձայնություն և այն արտահայտվել է եռակողմ պայմանագրում (ուղարկող և ընդունող բուհեր, ուսանող):
• **ում է վերաբերվում քաղաքականություն** • **խախտողների պատասխանատվությունը**	**Ամբիոնի պատասխանատվությունը** Կրեդիտների ճանաչման համար պատասխանատու է համապատասխան ամբիոնը, որը պատասխանատվություն է կրում իրականացնելու հանգամանալից ուսումնասիրություն և ուսանողին ներկայացնելու ընդունման կամ մերժման մասին մանրամասն տեղեկատվություն, քննարկելու ամբիոնի նիստում և արձանագրելու վերջնական որոշումը: **Ուսանողի պատասխանատվությունը** Ուսանողի պատասխանատվությունն է ներկայացնել դասընթաց/ների ծրագիրը, վերջնարդյունքները, գնահատումը և ամբիոնի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:
Որակի ապահովում	ԵՄՀ Որակի ապահովման կենտրոնը պարտավոր է ապահովել կրեդիտների ճանաչման և փոխանցման, ինչպես նաև ընթացիկ մշտադիտարկման կանոնակարգված և հստակ մեխանիզմներ,

	որոշումների կայացման հստակ ընթացակարգեր՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունը և որակը:
Բողոքարկում	Կրեդիտների ճանաչման վերաբերյալ ամբիոնի որոշումը ուսանողը կարող է բողոքարկել մեկշաբաթյա ժամանակահատվածում՝ ներկայացնելով դիմում Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին և կցելով հավելյալ հիմնավորող փաստաթղթեր:
Առնչվող այլ աստաթղթերի ցանկ	1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ https://www.ysmu.am/website/images/website/iravabanakan klinika/2.pdf 2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի N 1240-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հիմնավորումը https://www.e-draft.am/projects/290/justification 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR10-14_1.pdf
Քաղաքականության ներդրմանն առնչվող կարգեր, ընթացակարգեր	• ԵՄՀ ակադեմիական շարժունության և կրեդիտների փոխճանաչման ընթացակարգ • Ոչ ֆորմալ կրթության, գործնական աշխատանքի (պրակտիկայի) արդյունքների և վիրտուալ դասընթացներից կուտակած կրեդիտների ճանաչման ընթացակարգ
Քաղաքականության իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումները	• ԵՄՀ Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր
Քաղաքականության վերանայման պարբերականությունը	Ըստ անհրաժեշտության